ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 43** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 1–ի թիվ 79 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը մշակելու, ընդունելու, փոփոխելու եւ չեղարկելու կարգի մասին» հիմնադրույթի 3-րդ կետի երկրորդ պարբերության իրագործման նպատակով՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) արձանագրության 3-րդ կետի իններորդ պարբերությանը եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 31-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը մշակելու եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ կատարելու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 79 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի2016 թվականի
փետրվարի 12-ի թիվ 43 որոշմամբ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 79 որոշման մեջ կատարվող

1. Անվանման մեջ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի» բառերով։

2. Նախաբանը «2010 թվականի» բառերից հետո լրացնել «որոնք գործել են նախքան «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելը» բառերով։

3. 1-ին կետում «Մաքսային միության կանոնակարգերի» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության կանոնակարգերի» բառերով։

4. Նշված Որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը մշակելու եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ կատարելու պլանը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 79 որոշմամբ
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի փետրվարի 12-ի
թիվ 43 որոշման խմբագրությամբ)

ՊԼԱՆ

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերը մշակելու եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ կատարելու

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]

[1] Սույն պլանի I բաժնով նախատեսված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի անվանումները, ինչպես նաև սույն պլանի II բաժնով նախատեսված փոփոխությունների առարկան կարող են փոփոխվել դրանց մշակման ընթացքում:

[2] Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի նախագծի ներպետական համաձայնեցման արդյունքների հիման վրա անդամ պետությունների կողմից ընդունված որոշումները Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը մշակելու, ընդունելու, փոփոխելու և չեղարկելու կարգի մասին» հիմնադրույթի 15-րդ կետին համապատասխան:

[3] Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 28-ի թիվ 526 որոշմամբ հաստատված՝ այն արտադրանքի միասնական ցանկը, որի նկատմամբ Մաքսային միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ:

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
I. Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերը մշակելը				
1. Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ (այսուհետ՝ անդամ պետություններ)	2014 թվականի I եռամսյակ[4]	54.
2. Հանքային պարարտանյութերին ներկայացվող պահանջների վերաբերյալ	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2014 թվականի I եռամսյակ:[4]	47
3. Սպառողին էլեկտրական էներգասպառող սարքերի էներգետիկ արդյունավետության մասին տեղեկացնելու վերաբերյալ	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2014 թվականի I եռամսյակ:[4]	2

[4] Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգի նախագծի ներպետական համաձայնեցման արդյունքների հիման վրա անդամ պետությունների կողմից ընդունված որոշումները ներկայացվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը մշակելու, ընդունելու, փոփոխելու և չեղարկելու կարգի մասին» հիմնադրույթի 15-րդ կետին համապատասխան:»:

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
4. Ձկան եւ ձկնամթերքի անվտանգության մասին	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2014 թվականի I եռամսյակ:[4]	53
5. Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերին ներկայացվող պահանջներ	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2014 թվականի III եռամսյակ:[4]	61
6. Ատրակցիոնների անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2014 թվականի III եռամսյակ:[4]	8
7.Շենքերի եւ շինությունների, շինարարական նյութերի եւ արտադրատեսակների անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2015 թվականի III եռամսյակ:[4]	21,22
8. Էլեկտրատեխնիկայի եւ ռադիոտեխնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	2
9. Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրերի անվտանգության մասին	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	53

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
10. Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	8
11. Էլեկտրական էներգասպառող սարքերի էներգետիկ արդյունավետությանը ներկայացվող պահանջների մասին	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	անդամ պետություններ	2016 թվականի I եռամսյակ	2
12. Կերերի եւ կերային հավելումների անվտանգության մասին	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի I եռամսյակ	55
13. Թռչնամսի եւ դրա վերամշակումից ստացված արտադրանքի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի I եռամսյակ	53
14. Բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանության համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի I եռամսյակ	63

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
15. Քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի I եռամսյակ	63
16. Հրդեհային անվտանգությանը եւ հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջների մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի I եռամսյակ	38,39
17. Աճուխին եւ դրա վերամշակումից ստացված արտադրանքին ներկայացվող պահանջներ	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	60
18. Սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	1,2, 32,36
19. Տրանսպորտային փոխադրման եւ (կամ) օգտագործման համար նախապատրաստված նավթի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	64
20. Տրանսպորտային փոխադրման եւ (կամ) օգտագործման համար նախապատրաստված բնական այրվող գազի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	65

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
21. Հեղուկ եւ գազանման ածխաջրածինների տրանսպորտային փոխադրման համար մայրուղային խողովակաշարերին ներկայացնող պահանջների մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	66
22. Բարձրավոլտ սարքավորումների անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2017 թվականի IV եռամսյակ	3
II. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ կատարելը				
1. Մեքենաների եւ սարքավորումների անվանգության մասին (ՄՄ ՏԿ 010/2011) (առեւտրի, հանրային սննդի ձեռնարկությունների եւ սննդային բլոկերի համար տեխնոլոգիական սարքավորումների խմբերի համապատասխանության հավաստման ձեւերի հետ կապված անորոշությունը եւ տեխնիկական անճշտությունները վերացնելու մասով թիվ 1 փոփոխություններ) (1-ին հոդվածի 5-րդ կետ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2014 թվականի IV եռամսյակ։[4]	1

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
2. Փաթեթվածքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 005/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման փորձի արդյունքներով դրա առանձին պահանջները հստակեցնելու մասով թիվ 3 փոփոխություններ)	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2015 թվականի I եռամսյակ:[4]	36
3. Հացահատիկի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 015/2011) (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում տարընթերցվածքները «կանճրակ» յուղատու մշակաբույսի դեպքում բացառելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	56
4. Թեթեւ արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 017/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման փորձի արդյունքներով տեխնիկական ուղղումներ կատարելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	28

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
5. Երեխաների եւ դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 007/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը եւ առանձին դրույթներ հստակեցնելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	30
6. Սննդամթերքի մակնշման մասին (ՄՄ ՏԿ 022/2011) («դյուրընթեռնելիություն», «հասկանալիություն», «ֆոնի ցայտունություն» եզրույթները հստակեցնելու եւ այլ պահանջների մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2015 թվականի IV եռամսյակ	53
7. Սննդամթերքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 021/2011) (տեխնիկական կանոնակարգով եւ Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	53

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
պահանջներով սահմանված՝ սննդամթերքին ներկայացվող պարտադիր պահանջները միատեսակ դարձնելու մասով թիվ 2 փոփոխություններ)				
8. Երեխաների եւ դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 007/2011) (հագուստի եւ կոշկեղենի՝ սպորտային տեսականու հետ կապված կիրառման ոլորտը հստակեցնելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	30
9. Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 033/2013) (վերականգնված կաթը կաթնամթերքին դասելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	53
10. Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 018/2011) (սանիտարական տրանսպորտին ներկայացվող	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	10

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
պահանջները սահմանելու, անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված նույնանման պահանջների իրագործման արդյունքներով առանձին դրույթներ ճշգրտելու մասով, ինչպես նաեւ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան արտակարգ իրավիճակները եւ տարերային աղետների հետեւանքները վերացնելու նպատակներով օգտագործման համար նախատեսված տրանսպորտային միջոցները փոխանցելու հետ կապված թիվ 2 փոփոխություններ)				
11. Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 033/2013) (հասկացութային ապարատը ճշգրտելու եւ կաթ պարունակող մթերքի մակնշմանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ սահմանելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի II եռամսյակ	53

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
12. Խաղալիքների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 008/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտները եւ առանձին դրույթները հստակեցնելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	29
13. Փոքրաչափ նավերի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 026/2012) (տեխնիկական կանոնակարգի տարածման ոլորտը հստակեցնելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	20
14. Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 009/2011) («օծանելիքակոսմետիկական արտադրանք՝ արհեստական արեւայրուքի համար» եւ «վաճառող» եզրույթները ներառելու, կոսմետիկական արտադրանքի pH ջրածնային ցուցանիշի նկատմամբ պահանջները թարմացնելու, արժեքները թարմացնելու	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	34

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
եւ 1-5-րդ հավելվածների տեխնիկական սխալները վերացնելու մասով թիվ 2 փոփոխություններ)				
15. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ (ՄՄ ՏԿ 029/2012) (տեխնիկական կանոնակարգով եւ Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներով սահմանված՝ սննդային հավելումներին ներկայացվող պահանջները միատեսակ դարձնելու մասով, ինչպես նաեւ մսային արտադրանքի մեջ ֆոսֆորաթթվի եւ սննդային ֆոսֆատի պարունակության մասով թիվ 2 փոփոխություններ)	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	54

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
16. «Ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 032/2013) (նոր եզրույթներ ներմուծելու, տեխնիկական կանոնակարգի առանձին դրույթներ հստակեցնելու մասով, տեխնիկական կանոնակարգի կիրառման փորձի արդյունքներով տեխնիկական ուղղումներ կատարելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի III եռամսյակ	5
17. Սննդամթերքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 021/2011) (շոկոլադին, շոկոլադային արտադրատեսակներին եւ կակաոյից պատրաստված մթերքին ներկայացվող լրացուցիչ պահանջներ սահմանելու մասով թիվ 3 փոփոխություններ)	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	53
18. Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 004/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը հստակեցնելու, տեխնիկական	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	2

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
կանոնակարգում Մաքսային միության՝ ընդունված տեխնիկական կանոնակարգերի դրույթների կրկնվելը բացառելու մասով թիվ 1 փոփոխություններ)				
19. Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 019/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը հստակեցնելու եւ տեխնիկական կանոնակարգման առանձին օբյեկտներին ներկայացվող պահանջները հստակեցնելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	37
20. Ավելցուկային ճնշման տակ աշխատող սարքավորումների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 032/2013) (տեխնոլոգիական խողովակաշարերի վրա տեխնիկական կանոնակարգի գործողության տարածումը բացառելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	5

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
21. Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն (ՄՄ ՏԿ 020/2011) (տեխնիկական կանոնակարգի կիրառման ոլորտը հստակեցնելու, տեխնիկական կանոնակարգում Մաքսային միության՝ ընդունված տեխնիկական կանոնակարգերի դրույթների կրկնվելը բացառելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	2
22. Սննդամթերքի մակնշման մասին (ՄՄ ՏԿ 022/2011) (գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների կիրառմամբ սննդամթերքի ստացման կամ սննդամթերքում այդպիսի օրգանիզմների պարունակության մասին տեղեկությունների մասով թիվ 2 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	53

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
23. Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 031/2012) (տրակտորների բնապահպանական անվտանգությանը, տրակտորների նույնականացման մակնշմանը ներկայացվող պահանջների, սեղմված բնական եւ հեղուկացված ածխաջրածնային գազով աշխատող տրակտորներին ներկայացվող պահանջների մասով, հղումային ստանդարտները եւ ՄԱԿ-ի ԵՏՀ կանոնները թարմացնելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Բելառուսի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	11

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
24. Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 001/2011), Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 002/2011), Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 003/2011) («նորարարական արտադրանք» եզրույթի սահմանումը, տեխնիկական կանոնակարգերի կիրառման ոլորտը, առանձին դրույթները հստակեցնելու եւ դրանք «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխանեցնելու մասով թիվ 1 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	15.23
25. Խաղալիքների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 008/2011) (խաղալիքների հոգեբանամանկավարժական անվտանգությանը ներկայացվող պահանջները սահմանելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	29

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
26. Մեքենաների եւ սարքավորումների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 010/2011) (փոքր հիդրոէլեկտրակայանների սարքավորումներին ներկայացվող լրացուցիչ պահանջների մասով թիվ 3 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	1
27. Սննդամթերքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 021/2011) (սննդում կեսաբանական ակտիվ հավելումներին ներկայացվող հատուկ պահանջները բացառելու մասով թիվ 4 փոփոխություն), Սննդամթերքի մակնշման մասին (ՄՄ ՏԿ 022/2011) (սննդում կեսաբանական ակտիվ հավելումներին ներկայացվող հատուկ պահանջները բացառելու մասով թիվ 3 փոփոխություն), Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2016 թվականի IV եռամսյակ	53

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
(ՄՄ ՏԿ 027/2012) (սննդում կենսաբանական ակտիվ հավելումներին, դրանց արտադրությանը, իրացմանն ու մակնշմանը ներկայացվող հատուկ պահանջները սահմանելու մասով թիվ 1 փոփոխություններ)				
28. Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 024/2011) (տեխնիկական կանոնակարգի, այդ թվում՝ բուսայուղերի տրանսպորտային փոխադրմանը վերաբերող առանձին դրույթներ հստակեցնելու մասով թիվ 2 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2017 թվականի II եռամսյակ	53

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի) անվանումը[1]	Պատասխանատու մշակողը	Համամշակողները	Տեղեկատվություն ներկայացնելու ժամկետի վերաբերյալ [2]	Միասնական ցանկի դիրքի համարը[3]
29. Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 018/2011) (անդամ պետությունների կողմից տրանսպորտային միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջների համաձայնեցման գծով միջազգային համաձայնագրերում մասնակցության վերաբերյալ պարտավորությունների կատարման հետ կապված թարմացման մասով թիվ 3 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2017 թվականի II եռամսյակ	10
30. Սննդամթերքի անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 021/2011) («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխանեցնելու եւ սննդամթերքի ու պարենային (սննդային) հումքի լցնովի եղանակով տրանսպորտային փոխադրման միջոցներին ներկայացվող պահանջներ սահմանելու մասով թիվ 5 փոփոխություններ)	Ռուսաստանի Դաշնություն	անդամ պետություններ	2017 թվականի II եռամսյակ	53